

Հայտարարություն

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի ղեկավարությունը հայտարարում է առ այն, որ պատասխանատվություն է կրում

1) բանկի ֆինանսական վիճակը (բոլոր էական առումներով) արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար, այն է՝

ա. հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, խորհրդի կողմից հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,

բ. հիմնավորված գնահատումներ և հաշվարկներ կատարելու համար,

գ. Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջների պահպանման համար,

դ. հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,

ե. ֆինանսական հաշվետվությունները բանկի գործունեության անընդհատության հիման վրա պատրաստելու համար,

2) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին համապատասխանող արդյունավետ և հուսալի ներքին հսկողության համակարգի մշակման, ներդրման և գործունեության ապահովման համար,

3) բանկի ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն համակարգի ներդրման համար,

4) բանկի ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ՝ իր իրավասությունների սահմաններում, միջոցներ ձեռնարկելու համար:

Բանկի վարչության նախագահ

Գլխավոր հաշվապահ




Ա.ՕՍԻՊՅԱՆ


Գ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ